



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2010թ. հունիսի 17-ի, թիվ 87 -Ա
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԻ ՇԱՐՔ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արագածոտնի մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1808-Ն որոշմամբ հաստատված Հ. Արագածոտնի մարզպետարանի կանոնադրության 30-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թվականի ապրիլի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 329-Ն որոշումը **որոշում են.**

1. Հաստատել՝

- 1) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կանոնադրությունը համաձայն հավելված 1:
- 2) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կանոնադրությունը համաձայն հավելված 2:
- 3) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության կանոնադրությունը համաձայն հավելված 3:
- 4) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կանոնադրությունը համաձայն հավելված 4:
- 5) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության կանոնադրությունը համաձայն հավելված 5:

6) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կանոնադրությունը համաձայն հավելված 6:

7) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության կանոնադրությունը համաձայն հավելված 7:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՍԱՀԱԿՅԱՆ